

կարգական փոփոխութիւններ մտցնելով:

Բ. Մելգոնեան Աբրահայր (Շամլեանի բացատրութեամբ) «թուխի նստած» է եղեր մեծազուժար նպաստի մը վրայ:

Գ. Թուֆալարար կը զլանայ Վենետիկոյ Ուխտին Միֆթարեան տիտղոսի անդրա-նիկ գործածութիւնը:

Մի առ մի կու տանք ասոնց համառօտ պատասխանները:

1. — Շամլեանէ յիրաւէ ոչ մէկ փաստ կարելի չէր սպասել ըսածներուն ի հաս-տատութիւն, վասն զի դերին է՝ դուշա-կել գործածած աղբիւրները, բայց յիշելու էր առածը որ կ'ըսէ. *Audi alteram partem*. Լսէ միւս կողմն ալ:

Պատակաւորի պատճառ եղողները ոչ թէ Մելգոնեան Աբրահայր, այլ Հ. Ա. Բա-բիկեան եւ իր գործակից Հ. Մ. Գաս-պարեան եղած են, որոնք «պատրուակաւ բարեկարգութեան կամեցան երեւելի փո-փոխութիւնս մուծանել ի Միաբանութեան մերում ընդդէմ կանոնադրութեան եւ մը-տաց Միֆթար Աբրայի հիմնողի այսպէս Միաբանութեան»¹. Կը կարդանք զայս մեր Մայր-Դիւանի յիշուած տխուր դէպ-քերու ժամանակակից վաւերացութիւն մը մէջ: Կայ զայդ հաստատող անհերքելի փաստաթուղթ մըն ալ Վենետիկոյ Պատ-րիարք Մոնս. Ճիովաննի Պրակատինոյէ, որուն դիմած էին զոյգ պարագլուխները: Ահա թէ նա ինչ կը գրէ պատրիարքա-կան վճռով, պաշտօնապէս հովուական այցելութենէն վերջ, յետ զանոնք Միա-բանութեան եղբայրութենէն անջատելու եւ Ս. Ղազարու վանական խաղաղութեան իբրեւ վրդովիչներ Վենետիկ քաղաքէն ալ հեռացման զատապարտելու, վերստին հաստատելով Մելգոնեան Աբրահայրը իր նուիրական արժանաւոր պաշտօնին եւ համբաւին բարձրութեան մէջ. «Զօրու-թեամբ այսօր օրինադրութեան կարգա-դրեմք, զի գայժմու Բնդհանրական Աբ-րահայրն Ստեփանոս Մելգոնեան ընտ-

րեալն ի 6 ապրիլի 1750, եւ գյաջորդա-բար ծանուցեալն միշտ յամենեցունց օ-րինաւոր Մեծաւոր, եւ Երախտապարտ յաղագս գերագանց հոգեւոր եւ մարմնա-ւոր արդեանց եւ արգասաւորութեանց ընծայելոց Միաբանութեան իւրում, եւ յաղագս քաղցր եւ միանգամայն նախան-ձաւոր փութոյ առ պահպանութիւն այնք կրօնաւորական կարգի, առ յապայն ցոր-չափ տեւեցեմն բնական կեանք նորա, ա-մենեքիմ իբր այնպիսի ծանկեցեմ, յար-գեցեմ եւ հնազանդեցիմ ընդ պարտա-ւորութեամբ պատճոց¹»:

Զամլեան Հ. Միքայէլ ալ նամակ մը ունի 1775 թուականին գրուած, ուր յի-շատակութիւն ընելով երկու պարագը-լուխներուն անցեալ շարժումներուն նը-կատմամբ՝ այսպէս կ'արտայայտուի. «Ինքեմք քուլացեալ էին, կարծէին թէ եւ կանոնքն քուլացեալ են: Ինքեմք ա-պականեալ էին, կարծէին թէ եւ կարգ կրօնիս մերոյ ապականեալ է»:

Խիստ նշանակալից է նոյն ինքն Հ. Ա. Բաբիկեանի հոգեկան արտայայտութիւնը, որուն համար «Զայլ ոք դնէ յանցաւոր², կ'ըսէ Հ. Մատթէոս Եւդոկիացի, եւ Աբ-րահայրմէն կը «խնդրէ առաքել գվկայա-կանս իւր, զի կարող լիցի պատարագել մի՛ դիցէ Գերայրգութիւնդ ի մտի — կ'ը-սէ նա — եթէ ես որոշեցայք ի Միաբա-նութեմէս, զի յաւիտ գմարմինս իմ տես-չիք մեռեալ ըստ Հ. Պողոսյ ասելոյն, քան թէ զիս որոշեալ³»: Այսպիսի թա-քանմանքներ զանազան անգամներ եղած են երկուքին կողմէ ալ: Հոգեբանական է մանաւանդ ուղղակի Գասպարեանի կող-մէ Աբրահայր ցաւած սիրտը ամօքելու սա խօսքը. «Գերայրգելի Հայր, մի՛ դիցէ

1. Ժամանակագրութիւն Ուխտիս, 1773, սեպտ. 22, էջ 524, որ բնագիրն է հայ թարգմանութիւն միասին են:

2. Անդ, էջ 528.

3. Անդ.

ինչ ի սրտի վասն անցիցն անցելոց, որ ինչ եղեմ եղեմ⁴»:

Յամենայն դէպս ինքնին կը նշանակեն այսպիսի խօսքեր, թէ նախապէս իրենց ըրած դաւադրութիւնները երբեք վաւե-րանալի բաներ չէին, որոնց դէմ վերջ ի վերջոյ գլուխ կը բարձրացնէ խղճի խայ-թը ուժգին բողբոջելով: Յովհաննէս Թով-մաճան կը յիշէ 1785 թուականի իր հան-դիպումը Հ. Մինաս Գասպարեանին: Սա լսելով որ Թովմաճան մտադիր է Մի-թարայ վանքը վերադառնալ՝ արտասուա-լից աչքերով «Երանի քեզ Թովմաճան — կ'ըսէ — եւ յոյժ բարեւ արարեր, զի եւ ես յոյժ գգուեալ եմ ի մէջ սոցա (Թրես-տացոց)⁵»:

2. — Բայց Շամլեան չգատուելով իր ընտրած աղբիւրէն՝ կը շարունակէ այս-պէս. «Պատակաւորի գլխաւոր պատմա-ւոր եղած էր հնդկահայերէ հաւաքուած մեծագումար նպաստ մը, որուն վրայ Թուխի նստած էր⁶ Մելգոնեան Աբրա-հայրը»:

Մասնաւոր ծրագրով եւ յատուկ նպա-տակով յերկրուած լուր մըն է այդ, զոր հնարած են նոյն զոյգ պատակաւոր տար-րերը: Այդ լուրը հետադային փոխադրու-ած է՝ միեւնոյն թողովակներով՝ Վե-նետիկի Միֆթարեան Միաբանութենէն զատուող Հ. Սարգիս Թէոդորեանէ, «որ եւ գծտուելով Վենետիկցիների հետ — ինչպէս կը խորհրդածէ Յ. Զաւրեան — եւ հեռանալով նրանց շարքերից՝ նա ա-ռանձին հիմքեր չունի խնայելու Վենե-տիկցիներին⁷»: Երրորդ մըն է Ճիագո-մոյ Գաղանովա, (ծն. 1725), անսկզբ-բունք, պատեհապաշտ եւ արկածախնդիր

5. Պատմ. Տէր Յովհաննէսի Թովմաճանեան, 1790. շարագրեալ ի նոյն Թովմաճանէ էջ 405. — Գիւան Ս. Ղազարու.

6. Ընդգծումը մեր կողմէ:

7. «Միֆթարեան Միաբանութիւնների բաժանումը» (Հայրենիք ամսագիր, 1931 զեկտ. — 1932 մարտ):

մարդ մը, «որ Վենետիկէն հեռացած վար-դապետներուն հետ ծանօթութիւն հաս-տատած էր⁸» եւ ինչպէս ինքն իսկ կ'ըսէ. «Ուրք թէ տասր օրումն մէջ ես շատ մտերմացայ նրանց հետ⁹: Գաղանովան ալ ուրեմն նոյն Թրեստեան վարդապետներէն լսեմ է դրամական այդ առեղծուածային պատմութիւնը: Ուստի հոս ալ աղբիւրը նոյն է»:

Այս ամէնուն պատասխան կը զննէք Մեծն Միֆթար Աբրահայր Խոստովա-հայր եւ Քարտուղար սրբակենցաղ Հ. Մատթէոս Եւդոկիացոյ յայտարարու-թիւնը. «Սուտ է բանն այն՝ զոր տարա-ծեն հատեալքն ի մէջ, թէ վէն մեր ընդ աբրային վասն դրամաց մեծատանին էր, աբրային վասն դրամաց մեծատանին էր, զորոյ գիշարին եւ գմատակարարութիւնն պահանջեցաք եւ յոյ կամիլն նորա տալ գիտար ընկեցաք գնա եւ այլն... սուտ է ամենեւին, զի յայն ժամանակս՝ գայս-մանէ բնաւին խնդիր ոչ եղեւ՝ ոչ ի ժո-ղովս, եւ ոչ արտաք ժողովոց: Զայս քովս, եւ ոչ արտաք ժողովոց: Զայս քովս սակս յետոյ հնարեցին նոքա՝ զի պատմաւ պատմաւեցին առ ի պատր-ուակել զխայտաւորութիւն իւրեանց (ըստ այսմ իմա եւ գայլոց պատմաւոց նո-ցին)¹⁰»:

3. — Գալով Միֆթարեան տիտղո-սին, որուն գործածութեան անդրանկու-թեմն Պ. Ս. Շամլեան կը գրէ Ս. Ղա-թենէն Պ. Ս. Շամլեան կը գրէ Ս. Ղա-թարու մեր Միաբանութիւնը, միեւնոյն զարուստ յանկերդն է դարձեալ որ կը կըրկ-նուի այս անգամ ալ իրմէ, թէ «Վտար-եալները 19 Մայիս 1773ին իրենց նոր կա-նոնին մէջ կը ծրագրեն նոր վանատուն մը բանալ եւ անդրանիկ Աբրահայր անու-նով կ'որոշեն կոչուիլ Միֆթարեան, մինչ նոյն Ղազարեանները մինչեւ այդ քուակա-նը Անտոնեան կը յորջորջուէին նոյն ճրգ-նաւորին անունով»:

8. Անդ.

9. Անդ.

10. Ժամանակագրութիւն Ուխտիս, էջ 14.

Յայտնի կ'երևի այնպես, որ Պ. Յոզ-
ուածագիրը այս աշխարհէն չէ. ամենեւին
տեղեակ չէ գրական հրապարակի վրայ
այդ անուան շուրջ եղած այնքան բանա-
վէճերուն. բայց ինչպէս ըսինք վերը՝
միայն ինքը չէ մեղադրելի, այլ նաեւ
ՄԱՐՄԱՐԱՅի Խմբագրութիւնը, որ կը
հիւրընկալէ նման անխնամ գրութիւն մը
առանց ոեւէ յայտարարութիւն մը աւել-
ցնելու իր կողմէն չբեղանքի: Ամէն պա-
րագայի մէջ մենք յորդոր կ'ուզենք Ս.
Շամբեանի որ երթայ թղթատէ՛ անգամ
մը ԲԱԶՄԱՎԷՊի եւ ՀԱՆԴԵՍ ԱՄՍՕ-
ՐԵԱՅԻ 1929 եւ 1930 տարիներու էջերը,
անդադրաւորաբար համար իր արձակած
քմահաճոյ վճիռներու անտեղութիւնը:
Մենք ԲԱԶՄԱՎԷՊի մէջ նախ բաւական
համարած էինք մի միայն դոհանալ Մել-
գոնեանի ընտրութեան առաջին երկու
տարիներու (1750-1751) շրջանին մէջ
Միսիքարեան տիտղոսի պաշտօնական
գործածութեամբը: Եւ երկրորդ անգամ
ուրիշ յորդածով մը հրատարակեցինք
չառ աւելի երկար շարք մը, եւ եռիջեան
ցուցակ մը Միսիքարեան կողմի ի նը-
պաստ Վենետիկի Միաբանութեան, սկսե-
լով նորէն Մելգոնեան Արքայոր ընտրու-
թենէն (1750) եւ հասցնելով մինչեւ
Թրիեստեան բաժանումը (1773):

Այդ բանավէճէն երկու տարի վերջ մի-
ակ դէպք մը անգամ բաւական եղած էր
Յովհաննէս Զաւրեանի, որ կարդալով
Վենետիկի Պատրիարք Մոնս. Պրակատի-
նոյի վճիռէն *Mechitarista* տիտղոսը,
զոր կու տար թէ՛ Մելգոնեան եւ թէ՛ Ս.
Ղազարու մեր վարդապետներուն՝ անվե-
րապահ կը յայտնէր իր համոզումը.
«Ինձ քուում է, լուծում է Վենետիկեան
ու վիեննական Միսիքարեանի վէճը, քե-
ն՝ առաջինը սկսեց Միսիքարեանն անու-

նը գործածել»¹¹: Եւ եթէ դեռ կը փափա-
գի Շամբեան, ինչպէս եւ ուրիշ սպասող-
ներ, կրնանք իսկապէս անսպասելին ալ
հաղորդել: Վենետիկի Միսիքարեան Միա-
բանութիւնը Վիեննայի Կաթոլիկական
չառ կանոնի, նոյն իսկ Մելգոնեան Ար-
քայոր ընտրութենէն շատ առաջ, եւ
ճիշտ Մեծին Միսիքարայ կենդանութեան
օրերուն՝ ճանչցուած է ուրիշներէ Միսի-
քարեանն տիտղոսով. եւ ինքն իսկ Միսի-
քար իր աչքերովը կարդացեր է այդ տիտ-
ղոսը տրուած իր որդիներուն: Նամակա-
գիրն է Ստամպուլի տայի Սիմոնեան Պո-
ղոս վարդապետ, մեր Երանաշնորհ Հիմ-
նադրի աշակերտներէն մին, որ կը գրէ
1724 նոյեմբեր 3-ին ի Ղալաթիա՝ Միսի-
քարայ Հաստատութեան թշնամիներուն
մէկ կարծիքը, թէ «Միսիքարեանք չեն
համախառնատեցեալք յեկեղեցականաց կը-
րօնաւորք»:

Բայց Շամբեանի շատ աւելի հաճոյք
պիտի պատճառէ գուցէ՝ երբ յիշատակեմ
անունը Թէոդէիկի, «քծալսնդիր Թէոդի-
կի», ինչպէս կ'որակէ ինք արդար համա-
րումով:

Ճիշտ այդ միեւնոյն Թէոդէիկն էր ու-
րեմն, որ անվերապահ սրբագրեց 1927ի
իր ԱՄԷՆՈՒՆ ՏԱՐԵՅՈՅՅԻՆ մէջ, ինչ որ
նախապէս գրած էր ՏԻՊ ՈՒ ՏԱՌԻՆ մէջ,
զոր Շամբեան կարդացած ըլլալը կը յայտ-
նէ: Ան յետ տեսնելու Բագմալիկէ պի
հեղինակաւոր բաղմամբիւ փաստերը՝ կը
յայտարարէր, թէ «Այս փաստացի ցուց-
մունքներով Ս. Ղազարու Հայրերուն կը
պատկանի ուրեմն Միսիքարեան տիտղո-
սի գործածութեան անդրանկութեամբ ի-
րաւունքը» (անդ էջ 561):

Կը մնայ այժմ տեսնել, թէ ՄԱՐՄԱ-
ՐԱՅի այդ Պ. Յոզուածագիրը (ինչպէս
եւ ուրիշներ) պիտի կարենա՞յ նոյնը խոս-
տովանելու այդ օրինակելի քաջութիւնն ու
վեհանձնութիւնն ունենալ:

Հ. Ղ. ՏԱՅԵԱՆ

11. Հայրենիք ամսագիր, 1932, Յունուար, էջ 139.

Ա.ԿԱԴԵՄԻԿՈՍ ԱՃԱՌԵԱՆԻ ՄՕՏ

(Արտատպուած «Սովետական Հայաստան»
ամսագրէն, Հոկտեմբեր 1945. գրուած է
Գ. Ստեփանեանէ):

Բարձրանում եմ Ստալինեան պողոտա-
յի հիանալի շէնքերից մէկի երրորդ յար-
կը ու նայում դռներին. «Աճառեան»:
Սեղմում եմ կոճակը. ներսից լսուում է
եղեկտարական դանդի զիւր ձայնը, որին յա-
ջորդում է ոտնաձայն ու բացուում է
դուռը:

Լսել եմ, որ մեծանուն ուսուցչապետ,
սիրուած աղագէտիկոս Աճառեանին միշտ
կարելի է գտնել աշխատելիս: Նրա աշ-
խատասիրութիւնը, որի արդիւնքն է 50
տպագրուած եւ մօտ 20 անտիպ ստուար
մեծարժէք գիտական աշխատութեան,
Երեւանում առածի կարգ է անցել:

Այդպէս էլ գտնում եմ նրան՝ դրասե-
ղանի մօտ նստած, ախոցն աչքերին,
թեքուած թղթի դէպի վրայ, արագ-արագ
գրելիս:

Բարեւում եմ: Մի պահ ընդհատում է
աշխատանքը, նայում եւ ասում.

— Հա՛, բարով եկաք: Նստեցէք: Այս
րոպէիս կը վերջացնեմ: Զբաղուեցէք բա-
ռարանիս նոր մամուլները թերթերով:
Տպագրութիւնը վերջացել է, մնում է
կազմելը:

Նա շարունակում է ինչ որ բան ար-
տագրել, իսկ ես թերթում եմ պատկա-
ռելի գիտնականի «Հայոց անձնանունների
բառարանի» երկրորդ հատորի տպագրե-
ւած մամուլները: Անցնում է մօտ հինգ
րոպէ:

— Վերջացրի. այժմ կարող եմ խօ-
սել, — ասում է նա գրիչը ցած դնելով
ու ամբողջ մարմնով դառնալով դէպի
ինձ.

— Հէնց ուզում եմ ձեր աշխատանք-
ների մասին խօսել, ծանօթանալ ձեր աշ-
խատութիւններին:

— Խնդրեմ:

— Այս՝ «Հայոց անձնանունների բա-
ռարանը» քանի՞ հատոր է լինելու:

— Կը լինի՞ հինգ հատոր: Երկուսը
տպուեց, մնաց երեք հատոր. այդ էլ կը
տպագրենք, արդէն վերջացրել եմ, աւե-
լացնում եմ միայն մի քանի անուններ:

— Երեւի աշխատում էիք երրորդ հա-
տորի վրայ:

— Ոչ, տպագրուում է նաեւ իմ «Հա-
յոց լեզուի պատմութեան» երկրորդ հա-
տորը: Ինչպէս գիտէք առաջին հատորը
վաղուց է տպուած: Գրաբար մի հատ-
ուած էի արտագրում Եգնիկից. դնելու
եմ «Հայոց լեզուի պատմութեան» մէջ
«Ոսկեդարեան հայերէն» գլխում. ի՞նչ
գեղեցիկ լեզու է, ի՞նչ ոճ, — ասում է
յուզմունքից դողացող ձայնով:

— Պրոֆեսոր, ձեր այս երկու աշխա-
տութիւններից ո՞րն էք աւելի արժէքաւոր
համարում:

— Իմ աշխատութիւններից ամենագը-
նահատելին «Հայոց լեզուի պատմու-
թիւնը» է. կարելի է ասել իմ գործերի
պսակն է, եղբայրացիներ. վերջ ի վեր-
ջոյ նրա մի մասն է կազմում նաեւ «Ար-
մատական բառարանը»: Միւս կողմից իմ
մատական հայագիտութեան մէջ, որը որ-
պէս յատուկ առարկայ աւանդուում է:

— Երեւի ձեր միւս կարեւոր աշխատու-
թիւնը համարում էք «Գաւառական բա-
ռարանը»:

— Չէ՛. Գաւառական բառարանս շատ
թերի է: Ճիշտ է, խոշոր հատոր է,
բայց ընդ ամէնը պարունակում է 30,000
բառ, իսկ իմ մօտաւոր հաշիւներով մեր
գաւառական բառերի թիւը 100 հազարից
աւելի է: Մի քանի տարի առաջ ձեռնար-
կեցի աւելի լիակատար գաւառական բա-
ռարան կազմելու աշխատանքին, սակայն
յետոյ կիսատ թողեցի՝ աւարտելու հա-
մար այժմ տպագրուող գործերս: